

թէ Կորիւն մեռած էր 449էն՝ Արտաշատի ժողովէն յառաջ։ Ասոնց մէջ ամէնէն նշանաւորն է Կորիւնի՝ Վասակի դրուատեաց տիտղոսներուն մէջ չյիշատակելը իր մարդպանութեան համնիլը (446 կամ 444) մինչ կը յիշէ Վ. Ամատունոյ հազարապետութիւնը։ Ուրեմն շատ հաւանօքն Կորիւն գրած է 446էն առաջ 445ին ամէնէն ուշը, որ մօտ կու գայ Գէլցերի 443ին։ Հետեւաբար Կորիւն չի կրնար անկնարկած ըլլալ «Հետագայ եղելութիւնների» եւ «Վասակի վարմունքի վրայ», որոնք Կորիւնի գրելէ յետոյ երեւան եկան։

Լուսուն:

Գ. ՓԱՏԳԼԵԱՆ

ՅԵՂԱԳՐԱԿԱՆ

ՃՈՐՈԽԻ ԸՆԴՅՈՒՆ

(Աշխարհագրական եւ պատմական հետազոտութիւնների)

ՆԵՐՆԾՈՒԹԻՒՆ

(Շայուն Ակոնթինա)

Առասպելական եւ խիստ վիպական է Ճորոխի Աւազանը իր նախապատմական աւանդութիւններով, իր շինութիւններով եւ իր բնակիչների անցեալով։ Խորենացին աւանդաբար մեզ պատմում է, թէ Ճորոխի ափերում Պասքամի սերնդից դժնահայեաց հսկայ Տորքը հրամանատար եւ վարիչ է դառնում։ «Կոպտանձն, տափակքիթ, խորակն եւ ժահաղէմ» այս վիթխարին իր ծայրահեղ այլանդակութեան համար Անգիդ է կոչում ժողովրդից, որի տիտանական ոյժի մասին տարածուած առասպել երգիծանքը Տորքին հաւասարացնում են Հելենական Հերակլին եւ Արխական Ռոստոմին։ Տորքի մասին Կղզած էպոսները տարբողում են, թէ նա սեւ ծովի ափերում կարծր ժայռեր է պոկել ապառաժներից, եղունգներով քերել, դրանցից տախտակներ է շինել, փշրել. կամ այդ ժայռերի վերայ եղունգներով արծիւների եւ գազանների պատկերներ է նկարել եւ թողել հետեւորդների հիացման առարկաներ։ Հասել է Պոնտոսի ծովափը, նաւերով վախած թշնամիների. ետեւից բլրաչափ ժայռեր է ծովը

գցել, որից առաջացած ալիքների տակ ընկըզմել է հակառակորդ փախստականներին իրենց նաւերով։ Անշուշտ այս էպոսները շարադրողները աչքի առաջ ունեցել են Պոնտոսի ապառաժների վրայ քանդակած արծիւներ եւ գազաններ, որոնց նմանները կան եւ ուրիշ երկիրներում մինչեւ այսօր։

Սակայն այսօր իրականութիւնը բոլորվին ներհակն է ցոյց տալիս։ Ճորոխի ակունքից մինչեւ ծովախառնումքը այնպիսի գեղադէմ բնակչութիւն ունի, որ հիացրել է բոլոր Եւրոպացի գեղադէտ ճանապարհորդներին։ Երկու սեռն էլ իրարհետ մրցելով՝ այնպիսի տիպարներ են արտայայտում, որ սքանչացնում են օտարականներին։ Մանաւանդ իդական սեռը իր յաղթանդամ կազմուածքի հետ այնպիսի գողտրիկ նրբութիւն ունի, այնպիսի վառվունդէմք, որ իսկապէս չքնաղ տիպ են կազմում։ Անխտիր բոլորն էլ պարթեւ հասակ ունեն, ուղիղ ողնաշար, լայն կուրծք, կարճ ու կլոր գլուխ, բարձր վիզ, սեւ ու շաղանակագոյն վարս, սեւ կամ ձիթագոյն աչքեր — երբեմն կապոյտ, ձիւնի նման սպիտակ մորթ, նուան զոյն այտեր, վարդագոյն եւ նուրբ շրթունք ու ականջներ, մի գծի վրայ ճակատ եւ ոսւնգ, բոլոր կզակ, նրբին թաթեր եւ ոտքեր, մարդարտափայլ ակունքը, կամար ունքեր, երկար թերթեւիչներ, փղոսկորի նման ողորկ բազուկներ, ճկուն իրան եւ վայելուչ շարժուամներ։ Գուցէ ո՛չ թէ իսկապէս նրանց տգեղութեան համար են անգեղեայ անուանել, այլ ուղեցել են յայտնել թէ նրանցից աւելի գեղեցիկներ չկան աշխարհի որեւէ մասում, ճիշտ այնպէս, ինչպէս, ասում ենք «Անգին» այնիրին, որ իր արժանաւորութիւններով այնքան բարձր է, որ չի կարելի գին դտնել, անգին է։ Պէտք է ենթաղերել, որ սրան — Անգեղուանը — Պասքամի սերդին ատել են, գարովել են, ո՛չ թէ տգեղութեան, այլ բռնակալութեան համար, քանի որ սրանք իրենց լուծը դրել էին Բալախոսի, Ծոփքի, Տարուրերանի, նոյն իսկ Եկեղեաց բնակչութեան ուսւին։

Անկասկած Տայեցիները եթէ մտաւորապէս, տնտեսապէս բարձր ըլինէին այդդրացի ժողովրդից, չին էլ կարողանալու նրանց տիրել։ Հետեւաբար երկար դարեր այնքան ուժեղ եւ բարձր են եղել դրացիներից, որ նրանց վրայ տեսուչ եւ վարիչ են

դարձել։ Խորենացու նկարագրութեան համաձայն Գարթեւ Վաղարշակը Պոնտոսն ու Եգեյիան բարեկարգելուց յետոյ, Գարիալի (Վտակի) ստորոտում, Տայքի մառախլապատ մութ անտառներում, լորենիների մէջ իր վայելքի համար ամառանոց — ձմեռանոց (կանանոց, թագստոց, գանձարան, վարժարան) է շինել տալիս, այդիների, բուրաստանների եւ վարդաստանների վերածում այդ գէճ եւ ճախճախուտ վայրերը։ Երեւի խօսքը վերաբերում է հին Պալմարին եւ Խալխալին, ուր շինել է տալիս, վերաշնուրմ իր տոհմական կալուածները։

Խորինացին եթէ գաղափար չունենար Պալխար եւ Խալխալ ոստանների մասին, նաչիր վերաբերի Վաղարշակին դրանց կառուցումը։ Խորենացու ժամանակ այդ ամառանոց-ձմեռանոցի գոյութիւնն է նրան յիշեցնում, թէ այդ հսկայական շնչքերը կառուցուել են այդ «մեծագործ Պարթեւի» ծրագրով եւ եռանդով։

Ճորոխի Աւազանի կուսական անտառներում են ծնել, սնել եւ զարգացել այնքաջ տիտանները, որոնք ո՛չ միայն դարէ դար իրենց ծննդավայրն են զարդացել ու ամրացրել անառիկ բերդերով, այլ իրենց սահմաններից դուրս են եկել, մտել են շըրջակայ նահանգները, նուաճել են Նայերի երկրի այլ եւ այլ գաւառները, նրանց հին նախարար կալուածատէրերին կոտորել, ջնջել, իրենք են գրաւել սրանց գոյքը եւ բազմոցը։ Այս նուաճումը նկատելի է, Բաբերդոնից, Բալխսոնից հետզհետէ շարունակուել է դէպի արեւմուտք Եկեղեց գոյնակուել է դէպի արեւմուտք Եկեղեց ըստ կանոնից մնացորդ որձաքարից, գայլախազից շինուած սուր, դաշոյն, նետի ու նիզակի ծայրի ժանիքաւոր ոլաքները, ուկորից, եղիքիրից շինուած գործիքները, քարի մուրճեր, փետաներ, կացիներ, կոպիտ տաշուած ու յղկուած ձեւերով, պարզ ձեռքով եւ ճախարակի վրայ շինուած կաէ ամաններ, մեծամեծ կարասները ցոյց են տալիս, որ Ճորոխի Աւազանի բնիկները այդ նախական շրջանի բովերից անցել եւ ապա մտել են նախ պղնձի եւ ապա երկաթի դարի շրջանները։ Սակայն շատ ցաւալի է, որ ժի՞րդ դարում անգամ գիտական խուզարկութեամբ ուսումնասիրութիւն չի կատարուել, ո՛չ գիտական արտադրութիւնների հետեւանքներից ստացուած հատակուորներին գժուար է հաւատ ընծայել եւ որոշ եղբակացութիւնների հասնել, անժխտելի փաստեր ներկայացնելով։

Ների մութ ցուցումներով, այլ նոյն իսկ այսօր գոյութիւնը պահպանած բերդերի, դղեակների անուններն ու աւերակները ստիպում են համոզուելու, որ հին Հայաստանի Խալդէական աշխարհի իւրաքանչիւր նախարարական տուն ունեցել է իր պատսպարան ամրոցը, ապաստարան բերդը, գանձարանը, կանանոցը եւ մանկանոցը այս աշխարհում։ Ամէն մի արտակարգ յարձակումների, ձախորդութիւնների, վտանգի դէպօւմ նապաստանների է իր ձորոխի Աւազանում ունեցած ամրոցում, ոյժերը հաւաքելու, վերակազմելու եւ դուրս չի եկել, մինչեւ որ աղջտը, սպառնալիքը չի անհետացել երկրից։ Կամ մինչեւ որ նոր ոյժերով կազմակերպուած՝ խիզախել, գնացել է երկրից դուրս արել անկոչ յարձակուող բռնաւորներին։ Այս պարագան նկատելի է ինչպէս պատմական, նոյնպէս Ուրարտա-Ասորական եւ նրանից վաղ շրջաններում։

Ճորոխի Աւազանում ձորերի եւ բարձունքների վրայ կանգնած կիսաւեր եւ աւերակ բազմաթիւ բերդերն ու ամրոցները, տոհմական հանգստաբանները եւ դոլմէնները մեղ ասում են, որ այս երկիրն ունեցել է իր նախնական բարբարոս, քաղաքական զարգացման բոլոր շրջանները։ Քարային շրջանից մնացորդ որձաքարից, գայլախազից շինուած սուր, դաշոյն, նետի ու նիզակի ծայրի ժանիքաւոր ոլաքները, ուկորից, եղիքիրից շինուած գործիքները, քարի մուրճեր, փետաներ, կացիներ, կոպիտ տաշուած ու յղկուած ձեւերով, պարզ ձեռքով եւ ճախարակի վրայ շինուած կաէ ամաններ, մեծամեծ կարասները ցոյց են տալիս, որ Ճորոխի Աւազանի բնիկները այդ նախական շրջանի բովերից անցել եւ ապա մտել են նախ պղնձի եւ ապա երկաթի դարի շրջանները։ Սակայն շատ ցաւալի է, որ ժի՞րդ դարում անգամ գիտական խուզարկութեամբ ուսումնասիրութիւն չի կատարուել, ո՛չ գիտական արտադրութիւնների հետեւանքներից ստացուած հատակուորներին գժուար է հաւատ ընծայել եւ որոշ եղբակացութիւնների հասնել, անժխտելի փաստեր ներկայացնելով։

Որ Ճորոխի Աւազանում գոյութիւն է ունեցել մայր իշխանութիւն, աւելի երկար դարեր կանանց ձեռքումն է եղել գերիշխանութիւնը, ամազոնները սարսափեցրել են ծովահէններին, գետահէններին։

սրանց առասպելների եւ արկածների հետ-քերը հասել է մինչեւ Հէլլէնների դիւցա-զանց դարը, Արգոնաւորդների շրջանը, այս յայտնի է պատմութեան։ Մեծամօր-Անա-հիտի պաշտամունքը, նրա քաղաքական եւ զինուորական գերիշխանութիւնը աւելի եր-կար դարեր պահպանուել է ձորոխի Աւա-զանում։ այդ մասին ճառում են առտնին պատմագրներից աւելի ընդարձակ կերպով երկրի տաճարներն ու բագինները։ Վիշա-պաղանց (Ջրապաշտութեան) պաշտամունքը այստեղ եւս այնքան զօրեղ է եղել, ինչպէս Արարատեան աշխարհի, Սիսականի բար-ձունքներում, ուր գերիշխել է Մայր-Դիցու-հին։ Նոյն իսկ միջնադարում եւ Օսման-եանների տիրապետութեան շրջանում, ձո-րերի, վիճակների տոհմական իշխանութիւնը մայրերի ձեռքն է եղել, փաստեր կան, գրաւոր փաստաթղթեր 1578—1839 տարիների թանգիմաթը Արդանուչի, Խալ-իմալի, Խախի, Մամի, Մամիխելի, Ոլորի կին վար-չապետները Օսմանեան սուլթաններից հաս-տատուած ինքնավար հասարակութիւններ են կազմել։

Ձորոխի Աւազանի անտառներում կաղնուց, կաղամախից, ընկուզից, տօսա-խից եւ ուրիշ ամրկենի փայտերից շինուած տնական կարասիները՝ տեղուր, սեղան (խոնչա), տաշա, շերեփ, գղալ, սանդ ցոյց են տալիս, որ այս երկիրը իր ինքնուրոյն զարդացումն ունեցել է եւ հասել է որոշ բարձրութեան։ Խրաքանչիւր առարկայի ձեւը, քանդակները, ծաւալը եւ մանաւանդ նիւթը յատուկ է միայն այս երկին։ չեն կարող նմանեցնել ուրիշ նահանջներում եւ տարածուած է հայկական 15 նահանջ-ներում։

Ձորոխն ունի իր յատուկ ձեւով նա-ւակներ-կայեկ, որոնք անձնատուր են լի-նում գետին եւ նաւապետները վարում են բիրերով (Երկար ձողերով)։ Գետով բարձ-րացնում են նաւակները ո՛չ թէ թիավարե-լով, այլ նաւաստիները չուաններով լծուում եւ ափից առաջ գնալով՝ քաշում են նաւակը, նաւապետը բիրը հպեցրած նաւակի քթին ցամաքի ափից ման գալով՝ վեր է մղում նաւակը, ճիշտ այն ձեւով ինչպէս կուր գետի վրայ կոլայից մինչեւ Լաքի-Շամախի-Վրացի նաւազները տանում են իրանց փայ-տի գերանների տոփերը։

Երկիրը, մանաւանդ գետափնեայ տա-

փարակները հրաշալի կերպով ողողւում եւ ընտիր տղմով ծածկում են հեղեղների բար-ձունքից բերած փտութիւններով, ուսո-գում են բնական բազմազան առուներով, ո-րոնք սահում են պարտէզների, այդիների եւ անտառների ստուերի տակով։ բայց ցա-ւալի է, որ սրբնթաց գետի հոսանքը բերած տղմի մէծագոյն մասը տանում լցնում է ծովը եւ ընդարձակում դելտան։ Բնակչու-թեան արհեստականապէս շինած պատուար-ները անզօր են կուռելու գետի հոսանքի դէմ, միայն այնքան առատ է ջուրը ու տիղմը, որ սրանց բաժինը միշտ մնում է։

Երկնամերձ բարձր լեռներով, ան-դընդախոր ձորերով եւ այլազան լանջերով այս երկիրը կլիմայական ներհակ ծայրեր է կազմում։ Սկսած Բաթումից մինչեւ Բոր-չըսիա, Արդվին, Ծրիա, Խալիսալ, Խեձոր եւ Պալսար մշտադալար անտառներ, պտղա-բեր ծառեր ունի ձորոխի այս երկար ձորը։ իսկ սրանց բարձունքը, լեռների կատարները երբեմն ծածկում են մի-երկու ամսով սպի-տակ ձիւնով։ Պալսարից մինչեւ ձորոխի ակունքը՝ Չըմեսը աւելի խիստ կլիմայ ունի, տարբերում է ստորին մասից։ Ընդհանրա-պէս կլիման խոնաւ է, անձրեւառատ, լեռ-ները ջրարձակ, աղբիւրներն ու առուները անհամար, լճակները դալարագեղ մարդե-րով բոլորուած, չունի Արարատեան եւ Վասպորական աշխարհների չոր եւ խիստ կլիման։ Երկրի գերքի համաձայն տեղ-տեղ մշտադալար եւ ծաղկուն է։ տեղ-տեղ ձմեռը ծառերը տերեւաթափ են լինում, սարերի լանջերը ձիւնով ծածկում։ Մի կողմը ցա-նում են ցորեն-զարի, միեւնոյն օրը մի ու-րիշ տեղ կալն են ծեծում։ Ոչ միայն մշտա-դալար ձիթենին, դափնին, կիտրոնին, նարնջին, թէյը աճում են եւ առատ բերք են տալիս, այլ նոյն իսկ 1000'—2000' բարձրու-թեան վերայ, Երկնամերձ լեռներն այնպէս են պատուարած խորխոր ձորերն ու տա-փարակները, որ Խեձորի, Խոդի, Ծրիայի, Որջողի, Մելոյի եւ Խալիսայի ձորերում երբեք չեն մըսում ձիթենիները։ Եթէ տա-րին նոյն իսկ խիստ ցրտալի է, ձմեռն ընդ-հանրապէս այնքան կարճատեւ է եւ ծո-վային տաք հողմն այնքան առատ, որ բերքը անմիաս ժամանակին հասնում է եւ այն-քան առատութեամբ որ բնակչութեան կա-րիքը բաւարարում է, սովոր չի մատնում։ Երկրի միջին-կենդրոն մասում, որ-

տեղից բղխում են ջրմես եւ թորդում վտակները, ունին 9.000'—12.000' բարձրութեամբ լեռներ, որոնք մինչեւ այսօր անտառապատ են եւ որոնց ճիւմի հալքը, ջրի ակները մշտնչենական են: Ջուրն ու ջերմութիւնը այս երկրում այնքան զօրեղ է, որ Օսմանեան իշխանութեան վերջին 300 տարուայ քաղաքակրթական անկման շրջանումն անգամ, ելեւմտական սնանկութեան օրերում ծորոխի Աւազանը համայն Հայաստանին ձէթ ու ձէթուն, չոր միրգ, մաթ ու տնական կարասիք էր մատակարարում, փոխադարձարար հացահատիկ, իւղ ստանում: Հնումը Կիսկիմի հովիաը, Հարշվի դաշտերը մատակարարել են Կարնոյ շամբին, Բասենին, Կարսին այնքան բրինձ ու բամբակ, որ լիացրել են Հովտիկը (Օվաճը), Ալաշկերտը եւ Խնուռը: Ճորոխի Աւազանի գինին այնքան առատ է, որ միշտ մատակարարել է շրջակայ նահանգներին: Թթենուց պատրաստած օղին միշտ այծի տկերով տարածել են իրենց շուրջը: Ժթրդ դարում ծխախոտն այնպիսի ընտիր բերք արտադրեց, ինչպէս Մուլդուր, Արտանուչ, Տանձոտ, Շաւշչո, Կիսկիմ, Իսպիր, որ շուկաներում այս մթերքի պահանջը նկատուեց:

Տեղական տնայնագործական բամբակի եւ բրդի գործուածները, կտաւ, մլա, մանուսա եւ շալ, սրանց ներկուածները իրենց դիրքը պահպանել են ամենավաղ ժամանակներից մինչեւ 1877, որից յետոյ իսպառ տեղի տուին եւրոպական մեքենական արտադրութիւններին: Սպերի, թորդումի, Կիսկիմի, Նարիմանի, Օլթի, Արդանուչի, Օքրոբագետի, Սաթլելի, Արդվինի, Մաճիսելի կտաւ, շալ եւ մետաքս գործող, մլա ու կապոյտ ներկող, մանուսա, գեղի, գողնոց, ջեջիմ, կապերտ եւ խալի գործող, չիթ դաճող, ծաղիկ բանող, պղնձադործ, դարբին, պայտառ, դերձակ, խաղախորդ եւ մաշկակար վարպետները իւլամ բնակալների ամենազաժան իշխանութեան շրջանումն անգամ անդորր եւ հասոյթարեր կեանք են ունեցել եւ տասն անգամ աւելի առատութեան մէջ էին եղել, քանի դեռ չէր տարածուած մեքենական աշխարհի արտադրած գործուածքները:

Օմբողջ Հաղար տարի արհեստաւորը իսլամի իշխանութեան մէջ աւելի լաւ վիճակ է ունեցել, քան թէ ժթրդ դարում, երբ

տեղական տնայնագործական արտադրութիւնները դուրս էին միլում շուկայից եւ րոպական մեքենական արտադրութիւնների միջոցով: Օսմանեան իշխանութեան սկզբնական շրջանից 1300—1800 տարիներին հարիւր հաղար ենիչքիների, սպահիների, պաշտօնակալների եւ ժողովրդի երկրամշակդասի հագուստը, կապուստը, կահաւորութիւնը, ձիերի սաքը, ուտելիքը, խմելիքը, բնակարանները, տաճարները-մզկիթները, ճանապարհներն ու կամուրջները շինել են հպատակ քրիստոնեաները-րայաները: Հայ ժողովուրդը ապրել է, կեանք է վարել չնորհիւր արհեստների, նրան պահպանել է միմիայն աշխատաւորութիւնը-գիւղատանտեսութիւնը: Սուլթան Սուլէմանի օրով, իբրահիմ փաշալի (Հայ տէրտէրի որդի) կազմակերպած տարագների կերպան ու ձեւը Հայ արհեստաւորի չնորհքն էր, որոնք որպէս նորաձեւութիւն փոխադրուեցան Եւրոպա 1530ին: Օսմանեան պետութեան ամենագլխաւոր որմադիրները, խալֆանները (ճարտարապետ), զինագործները-Քայրուրդից էին, ամենաընտիր ենիչքարական դաշոյնը եւ սիփայիների շէշխանաները Բայրութուրդիցներն էին պատրաստում: Եւրոպական մեքենական արտադրութիւնները իւեցին Հայ արհեստաւորների վերջին պատուը եւ նրան կործանեցին:

Ճորոխի Աւազանի բնական բերքերի հարստութիւնը-անտառները, պղինձը, ոսկին, արծաթը, երկաթը եւ պողպատը բնակչութեան առաջնորդել է զարգացնելու երկրագործութեան հետ զուգընթացաբար արհեստները: Այս երկին կից Կոլա, Արդահան, Զլիլ (լիճ շուրջը), Զաւախիք, Վանանդ, Բասեն ու Կարին գաւառների բնակչութիւնը դաժան կլիմայի պատճառով գարուն, ամառ եւ աշուն աշխատել է չարաչար: Խակ ձմեռը պառկել ու կերել է այնինչ Տայեցին ձմեռը մտել է անտառ, սաքել է իր ճախարակը, տախտակ է ձեւել, սնդուկ է շինել: Կաղնուց կաղամախու կոճերից միակտուր կարասիներ է ճախարակել, քուզա, գրուան, խալխալ ու մաղ է պատրաստել, անտառը շահագործել եւ դրացիների համար դործիքներ է պատրաստել: Նոյն խակ կաւ է կոփրձել-կուժ, կուլա, փարչ, պուտուկ, բղուղ, կարաս է թրծել եւ տարածել շրջակայ գաւառները: Ինչպէս մեղուն առատութեամբ մեղք է մատակարարել մեր եր-

կրին, Ճորոխի Աւազանի արհեստաւորն էլ իր ձեռարհեստով ողողել է: Ճորոխի Աւազանի այդեպանը ողջ ձմեռն աշխատում է պարարտացնել իր այգիներն, ագարակները, որ գարնան գործի սկսի. նրա համար ձմեռ չկայ: Այս երկիրը զարգացրել է հիւսնութիւնը. երեք վարպետ առանց մշակի մի շաբաթուան մէջ կարող են 12 սենեկից մի եռայարկ տուն շինել գերաններից եւ տախտակներից ամբողջ կազմով: Շինութեան հիմնական գերաններն ու ցիցերը ամրացնում են, երեք յարկը իրար վերայ, նախ ամենաբարձր յարկն են շինում, ապա միջին յարկը եւ վերջը ստորին-գետնայարկը: Ինչպէս Կ.Պոլսում մեծ հոչակ ունին քարաշին հիմնարկութիւնների համար Բայրուրդցիները, այնպէս անուանի են Ճորոխի Աւազանի հիւսները: Կ.Պոլսի եւ Սինոպի նաւաշինարանների գործերը Սեւ ծովի, Տրապիզոնի շրջակայքի եւ Ճորոխի Աւազանի հիւսներն են զարգացրել վերջին հինգ դարի ընթացքում: Երեք դար Սեւ ծովի նաւաշինարանները եղել է այս ճաների ձեռքին, որոնք թէ նաւը շինում եւ թէ ծովին իշխում էին: Մրիա, Որջող, Խալիսալ, Պալիսար եւ Բահը այնպիսի — քանդակաւոր փայտէ — կաղնի, ընկուղի, դափնի եւ շոճի-շինութիւններ կան, դարեւոր անցեալով, այնպէս երթածածկ եւ դարթաղունչ¹ շէնքեր կան, այն էլ ամենադիմացկուն կաղնիից, տօսախից եւ դափնիից շինուած, որ հազարաւոր տարուան կեանք են ունեցել: Ինչպէս նախապատմական այրերն, լերան լանջերում փորուած քարայրերը, սենեակները եւ սրահները ցոյց են տալիս, թէ մարդիկ նախնական շրջանում ինչպէս են կուտակուել այդայրերում, այդպէս էլ միջնադարեան այդ փայտեայ սենեակներն ու սրահները դադափար են տալիս նրանց կեանքի մասին: Գեղեցիկ են կաղնիից եւ տօսախից շինուած ամրաքերը, որոնք կարծես անփուտ փայտ լինին: Այս շինութիւնների մօտ, մասնաւանդ ծովի մօտ խոնաւ վայրերում ծառերի բնի վրայ սենեակներ եւ ամրաքերներ են շինել, որոնք կարծես թէ Սվանեան տների շարունակութիւնը լինին:

Լևահական:
(Եարուակելոյ:)

ԱԺՐՈՒՑ

ՍԱՅԵՆԱԽՈՍԱԿԱՆ

Dictionnaire d'histoire et de géographie ecclésiastique, publié sous la direction de Mgr. A. Baumdrillard, etc. etc. Paris (Letouzey et Ané, 76 bis, Rue des Saints Pères, VIIe), 1912—1926.

Letouzey եւ Անէ Հրատարակելէրու գեղեցիկ հրաւէրին անսալով է, որ A. Baumdrillard, A. Vogt ու U. Rouziés ձեռնարկած են կազմելու եւ լոյս հանելու Բառարան, որ ստուգիւ կոթողական գործ մը ըլլալու կոչուած է: 1912էն սկսած մինչեւ օրս հրապարակ ելած են երեք հատոր, (չորրորդէն լոյս տեսած է մաս մը, էջ1—447) իւրաքանչիւրը 1650 (կրկնասիւն) էջերէ աւելի եւ սակայն Ա գերը գեռ չէ վերջացած, ուստի կարելի է գուշակել թէ ի՞նչպիսի ընդարձակ երկասիրութեամբ պիտիօժառուի եկեղեցապատմական գրականութիւնը: Գործս իր մէջ կը պարփակէ ամէն կէտ, որ ուղղակի կամ անուղղակի եկեղ. պատմութեան ու աշխարհագութեան կը հայի: Հոն ամէն նիւթնկատուած է կուռ եւ պայծառ, արդի քննադատութիւններու համար մէջ բերուած են աղբիւրներ, որոնց գոյութիւնը միայն արդէն ձեռնարկիս կու տայ մեծ արժէք մը: Մէն մի կէտ ուսումնասիրուած ու գրուած է նոյն հարցին՝ մասնագէտ անձէ մը:

Հայ եկեղ. պատմութիւնն ու աշխարհագութիւնը հոն ներկայացուցած է † F. Tournebize, որ մինչեւ հիմայ Հրատարակուած հատորներուն մէջ կարգաւ ուսումնասիրած է՝ Ագաթանգեղոս, Աղբիանոս, Աղեքսանդր Զուղայեցի, Աղթամար, (Աղուանք), Այտընեան Գեր. Հ. Արսէն, Անակ, Անանիս Մոկացի, Ան. Նարեկացի, Ան. Շիրակացի, Ան. Սանահնեցի, Անանեան Հ. Մկրտիչ, Անաստաս Կաթ., Անի, Առաքել Բաղեշեցի, Առ. Դաւթիժեցի, Առ. Սիւնեցի, Առաքելեան Խաչատուր Վրդ. (Խաչ. Կարնեցի), Արամոնս եւն եւն:

Բայց ամէնէն աւելի խօսած է հայ եկեղ. պատմութեան մասին Արմենի բառին տակ (չորրորդ հատորին առաջին մասին մէջ՝ էջ 290—391, որ հատորին մէջ գրուած է նաեւ Ս. Արիստակէսի, Արիս. Լաստիվերացւոյ վրայ):

Համառօտիւ Հայաստանի գիրքն ու տարածութիւնը գծելէ վերջ կ'անցնի հեթա-

¹ Վարեադուն, ուշ, շաբաթական ութանկի հանի ծածկ: